

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

ՀՀ ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԻ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ
ԻՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հայաստանի տնտեսությանը վերաբերող վիճակագրական տվյալները վկայում են, որ 2012թ. դրությամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը՝ 97%-ը, բաժին է ընկնում գյուղացիական տնտեսություններին: Այդ նույն տարվա կտրվածքով գյուղատնտեսական համախառն արտադրանքի արժեքը 2012թ. կազմել է 840.4 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 9.5%-ով: Ընդ որում, համախառն արտադրանքի 60.9%-ը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 39.1%-ը՝ անասնապահությանը:

Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև հողային ռեսուրսների՝ մասնավորապես վարելահողի օգտագործման բնագավառում, որի նպատակային օգտագործման մակարդակը 2012 թվականին կազմել է 67.7%, նախորդ տարվա 63.8%-ի դիմաց:

Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները և երկրի անվտանգության հետ կապված հիմնախնդիրները, գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունն ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, տնտեսվարող սուբյեկտների գործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը և ենթակառուցվածքների զարգացմանը:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը կազմել է 303.6 հազ. հա, որը գերազանցում է 2011թ. մակարդակը 16.9 հազ. հա-ով: Բարձրացել է այգիների ինտենսիվացման մակարդակը, որը պայմանավորված է խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի որոշակի մեղմացմամբ: Միաժամանակ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման գծով զարգացած արդյունաբերություն և իրացման կայուն համակարգ ունենալը գյուղատնտեսության արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայմաններից է: Մասնավորապես դրան հասնելու համար գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների և կապիտալ ներդրումների ներգրավումը հնարավորություն կտան ավելացնելու աշխատանքի արտադրողականությունն ու բարձրացնելու արտաքին շուկայում հայկական ապրանքների մրցունակությունը:

Գյուղմթերքների արտադրման համակարգի բարելավումը պահանջում է ավելի հուսալի տեխնիկական միջոցներով վերամշակման ապահովում, շուկաների նկատմամբ ավելի ճկուն քաղաքականության կողմնորոշում, ավելի մեծ ուշադրություն արտադրանքի որակի նկատմամբ, ինչը հնարավոր կլինի կազմակերպել միայն ավելի նպաստավոր համագործակցության դեպքում: Հայաստանում նոր ձևավորվող արդյունաբերական բնույթի գյուղատնտեսության հատվածը, որը ենթադրում է մեծ կապիտալ ներդրումների իրականացում ջերմոցային, այգեգործական, ձկնաբուծական տնտեսություններում, իր հերթին կապահովի տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքի փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում:

Հանրապետության արդյունաբերության ճյուղի մեջ գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 33.6%, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 57.5%:

Ագրոպարենային համակարգի հետագա զարգացման համար գյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի (պարենամթերքի) իրացման խնդրի լուծումն ունի վճռորոշ դեր, քանի որ արդյունավետ չէ այն արտադրությունը, որը չի ունենում շահավետ իրացում: Գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման հարցը մի կողմից պայմանավորված է տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, իսկ մյուս կողմից գյուղատնտեսական մթերք գնող-իրացնող ենթակառույցների բացակայությամբ, որոնք ձևավորվում են դանդաղ և ունեն

արտահանման դժվարություններ:

Ըստ ուսումնասիրությունների, վերջին տարիների ընթացքում, գյուղացիական տնտեսություններում արտադրվող գյուղմթերքներից իրացվում է ընդամենը 50-55 %, իսկ դրանց կողմից արտադրված մթերքների իրացման գործընթացում ձևավորվող դժվարություններն իրենց բացասաբար ազդեցությունն են թողնում արտադրանքի գների վրա:

Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման, տեխնոլոգիաների կատարելագործման և այլ կարևոր խնդիրներ առավել արդյունավետ կարող են լուծվել ազրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության խորացման միջոցով:

Սննդամթերքի անվտանգության և որակի բարելավման հիմնախնդիրը՝ արտադրողների և վերամշակողների ներքին պահանջարկն է, որակյալ ներկրվող ապրանքների առկայությունը պահանջում է գոյություն ունեցող ստանդարտների խստացում, որակի կառավարման և անվտանգության ներքին վերահսկողության անհրաժեշտություն, որպեսզի պահպանվի ներքին շուկան, ներկրվող սննդամթերքը փոխարինվի տեղական արտադրությամբ և վերջիններիս համահունչ էլ կընդլայնվեն արտահանման հնարավորությունները:

Այժմյան պայմաններում խիստ կարևորվում է վերամշակող ընկերությունների և գյուղացիական տնտեսությունների միջև փոխհարաբերությունների զարգացումը: Սակայն կան խոչընդոտող հանգամանքներ, որոնցից կուզենայինք առանձնացնել հետևյալները՝

- վերամշակողները աշխատում են պահպանել իրենց եզակի լինելու առավելությունները, որն արտադրողներին ձեռնառու չէ,
- հողի սեփականաշնորհումը չի համապատասխանեցված վերամշակող կազմակերպությունների ապապետականացմանը,
- արտադրողից դեպի սպառողը գյուղմթերքների ազատ վաճառքին նպաստող կառուցվածքային բարեփոխումների իրականացումը,
- մեծածախ շուկաների շուկայական ենթակառույցների բացակայությունը:

Այսօր, որպես անհրաժեշտություն կարևորվում է ներքին շուկայում բնակչության պահանջարկը պարենամթերքի նկատմամբ, որը 55%-ով է բավարարվում տեղական արտադրության հաշվին: Ըստ կանխատեսումների այդ ցուցանիշը միջին և երկարաժամկետ հեռանկարում կարող է ավելանալ 10-20%-ով: Ինչ խոսք, ներքին շուկայի տարողունակությունը սահմանափակվում է բնակչության ցածր գնողունակությամբ, որի մակարդակի բարձրացումը հիմնականում պայմանավորված է մակրոտնտեսական կայունությամբ:

Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական հիմնական մթերքների իրացման կառուցվածքի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ներկայացնենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տվյալները 2012 թվականի վերջի դրությամբ (տե՛ս աղյուսակ 1):

Ակնհայտ է, որ բավականին ցածր է գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը: Հիմնական մասը սպառվում է տնտեսություններում և՛ արտադրական, և՛ անձնական կարիքների համար: Հացահատիկային մշակաբույսերի (37.7%), կարտոֆիլի (28.6%), կաթնամթերքի (42.1%), ձվի (54.4%), բրդի (22.6%) գծով սպառվել է գյուղացիական տնտեսություններում: Ակնհայտ է, որ այս վիճակում տնտեսվարող սուբյեկտները չեն կարող ապահովել ընդլայնված վերարտադրության, տեխնիկական վերազինման և արդյունավետության բարձրացման պահանջները: Ապրանքայնության մակարդակը, կախված գյուղատնտեսական մթերքների կառուցվածքից և իրացման պայմաններից, հանրապետության տարբեր մարզերում տարբեր է: Այսպես, ըստ 2012 թվականի վիճակագրական տվյալների հացահատիկային մշակաբույսերի ապրանքայնությունը բարձր է Գեղարքունիքի (47.4%), Կոտայքի (35.5%), Արմավիրի (39.7%) մարզերում, կաթի և կաթնամթերքի ապրանքայնությունը բարձր է Արագածոտնի (63.9%), Արմավիրի (69.4%), Կոտայքի (67.9%) մարզերում:

ՀՀ -ում գյուղատնտեսական մթերքների իրացման կառուցվածքը 2012թ. տվյալներով *

(արտադրության ծավալի նկատմամբ՝ տոկոսներով)

Հ/հ	Գյուղատնտեսական մթերքների անվանումը	Գյուղացիական տնտեսությունների կողմից			Օգտագործվել է տնտեսությունում, որից վերամշակվել է	Մնացորդը տնտեսությունում
		Վաճառվել է	Տրվել է ապրանքափոխանակման	Տրվել է բնամթերքով		
1.	Հացահատիկ և հատիկաբնդեղեն մշակաբույսեր	24.0	6.4	2.6	37.7/50.8	29.3
2.	Կարտոֆիլ	34.1	5.1	1.6	28.6/-	30.3
3.	Բանջարեղեն	71.1	6.3	0.6	18.5/47.4	3.5
4.	Բոստան	90.5	4.7	-	4.8/-	
5.	Պտուղ	60.5	4.9	0.5	24.9/42.8	9.2
6.	Խաղող	81.9	3.3	0.4	11.8/62.2	2.6
7.	Միս	81.1	2.4	0.2	15.9/2.8	0.4
8.	Կաթ, կաթնամթերք (վերամշակված կաթի)	45.1	5.4	0.6	42.1/58.5	6.8
9.	Ջուր	36.6	8.0	0.9	54.4/-	0.1
10.	Բուրդ	42.0	6.7	0.3	22.6/3.3	28.3

* ՀՀ ԱՎԾ տվյալներ:

Վերջին տասնամյակում գյուղատնտեսական մթերքների գծով վերամշակող համակարգը զարգացում է ապրում: Հաշվի առնելով Հայաստանում աճող մրգերի և բանջարեղենի բարձր որակն ու անասնաբուծական արտադրանքի բարձր համային և էկոլոգիական հատկանիշները, ներդրողներին ավելի հրապուրիչ են դարձնում և քաջալերում՝ նորանոր ապրանքներ դուրս բերելով արտաքին շուկա, որի արդյունքում օգնում են նոր վերամշակող կազմակերպությունների ստեղծմանը և առողջ մրցակցային պայմանների ապահովմանը:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ գյուղատնտեսական մթերքների՝ պտղի, խաղողի, բանջարեղենի հիմնական մասը գնվում է վերամշակող կազմակերպությունների կողմից (տես աղյուսակ 2):

Գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները ՀՀ վերամշակող կազմակերպություններում ըստ 2008-2012թթ. *

(հազ. տոննա)

Գյուղատնտեսական մթերքներ	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	հինգ տարվա միջինը	հինգ տարվա աճի միջին տեմպը, %
Խաղող	137.4	127.7	135.0	129.0	156.6	137,1	103,3
Բանջարեղեն	39.0	32.3	29.7	51.0	33.7	37,1	96,4
Պտուղ	19.4	11.2	3.6	14.3	25.5	14,8	107,1
Ընդամենը	195.8	171.2	168.3	194.3	215.8	189,1	102,5

* ՀՀ ԱՎԾ տվյալներ:

Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ չնայած պտղի գծով, ըստ ուսումնասիրվող տարիների աճի, միջին տեմպը կազմել է 107.1%, սակայն այդ նույն տարիներին, բնամթերքի ծավալը միջին հաշվով կազմել է 14.8 հազ. տոննա, որը նույնիսկ ցածր է եղել 2008 թվականի մակարդակից 6.1 հազ. տոննայով:

Միաժամանակ, ըստ աղյուսակի, 2012թ.-ին վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 59.2 հազ. տոննա պտուղ- բանջարեղեն: Պտղի մթերման ծավալը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 1.8 անգամ: Խաղողի մթերումը կատարվել է 40 ընկերության կողմից, մթերվել է

156.6 հազ. տոննա խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա մթերման ծավալը 21.5%-ով: Մթերված գյուղատնտեսական մթերքների արժեքը կազմել է 26.8 մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ, ագրովերամշակվող արդյունաբերության ոլորտում առկա խնդիրները կապված են գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացվող արտադրատեսակների մրցունակության բարձրացման, որակի բարելավման, իրացման և արտահանման հետ, քանի որ տեղական շուկայի պահանջարկը կազմում է արտադրվող պահածոների ընդհանուր ծավալի 20-40%-ը, իսկ խաղողի հումքով ոգելից խմիչքներից՝ մինչև 12%-ը:

Կարևորելով գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև գործող փոխադարձ պայմանագրային հարաբերությունների և դրանց սպասարկող առևտրային բանկերի միջոցով իրականացվող ապրանքի դիմաց անմիջական վճարումները, այնուամենայնիվ այս բնագավառում դեռևս կան չլուծված հիմնախնդիրներ: Մասնավորապես, գյուղմթերքների իրացման հարցը կապված է արտադրանքի պահպանման, փոխադրման, փաթեթավորման խնդիրների լուծման հետ: Գյուղացիական տնտեսություններն իրենց թարմ արտադրանքը հիմնականում սեփական միջոցներով փոխադրում են մոտակա քաղաքների շուկաները, և օգտվելով նպաստավոր պայմաններից, վերավաճառողները գյուղացիներից գնում են այնքան մթերք, որը կարող են իրացնել մեկ օրում, քանի որ բացակայում է դրանց երկար պահելու սառնարանային հնարավորությունները: Վերջին տարիներին ձեռնարկվել է սառնարանային տնտեսությունների վերագործարկման որոշ աշխատանքներ, որը գյուղատնտեսական մթերքների իրացման ծավալների ավելացման և որակական հատկանիշների պահպանման ու սպառման գների կայունության վրա ունի իր դրական ազդեցությունը:

Կատարված ուսումնասիրություններից ակնհայտ է դառնում, որ գյուղատնտեսության վերամշակված սննդամթերքի իրացման հարցը կապված է նաև պարենամթերքի արտահանման և ներմուծման խնդիրների հետ: Այսպես, գյուղատնտեսության ոլորտում արտադրության ծավալների ավելացումը դրական է անդրադարձել հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության ծավալների վրա: Միայն 2012թ. հանրապետությունից արտահանվել է 31.3 հազ. տոննա պտուղ, խաղող, բանջարեղեն և կարտոֆիլ, որից՝ 12.6 հազ. տոննա ծիրան, 1.6 հազ. տոննա դեղձ, 10.4 հազ. տոննա խաղող, 1.1 հազ. տոննա կեռաս և 2.4 հազ. տոննա բանջարեղեն: Արտահանման ծավալները գերազանցում են 2011թ. մակարդակը՝ 85.3%-ով, որը շատ դրական երևույթ է և իրականացվել է բավականին սահուն: Ներկայումս մեծ աշխատանքներ են տարվում տեղական արտադրության պարենամթերքի մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում բարձրացնելու ուղղությամբ, որը պայմանավորված է արտադրանքի ինքնարժեքի նվազմամբ, որակի բարձրացմամբ: Հայաստանի գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը համահունչ են տեղական սպառողների սննդամթերքի անվտանգության պահանջները և ներկրվող ապրանքների որակը: Հատկապես սննդամթերքի անվտանգության և որակի բարձրացումը սպառողների ու արտադրողների ներքին պահանջարկն է:

Սննդամթերքի իրացման գործընթացում կարևորվում է նաև հավաստի տեղեկատվության առկայությունը, որը հանդիսանում է արտադրողների միջև մրցունակության կարևոր նախադրյալ: Ուսումնասիրված գյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառի համար կարևոր հիմնախնդիրներից են՝

- գյուղմթերքների վերամշակումից ստացված արտադրանքի իրացման համակարգի անկատարելիությունը,
- մեծածախ շուկաների համակարգի բացակայությունը,
- մթերքների ապրանքային տեսքի, փաթեթավորման և տարավորման անբավարար վիճակը,
- գնող-պահպանող-արտահանող շղթայում կազմակերպված միջնորդված կազմակերպությունների բացակայությունը,
- տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը,
- բնակչության գնողունակության ցածր մակարդակը,
- միջազգային չափանիշներին համապատասխանող սննդամթերքի որակի երաշխավորման համակարգի բացակայությունը, սննդամթերքի իրացման, արտահանման գործընթացին օգնող

իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը,

- արտահանվող արտադրանքը՝ բարձր գների պատճառով արտաքին շուկայում ոչ մրցունակ լինելը:

Վերջին տարիներին Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր և գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների ծավալների վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ներկայացնենք աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր և գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների ծավալներն ըստ 2010-2012 թթ.*

(մլն ԱՄՆ դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2010թ.	2011թ.	2012թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Ընդամենը	1041.1	1334.3	1428.1	3748.9	4145.3	4266.4
Այդ թվում՝ կենդանի և կենդանական ծագման	23.6	30.1	33.1	101.4	133.3	136.3
Բուսական ծագման արտադրանք	15.8	23.2	34.7	214.1	242.1	259.8
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.029	0.025	0.056	49.2	57.9	59.6
Պատրաստի սննդի արտադրանք	131.1	183.8	255.3	308.8	347.9	356.9
Ընդամենը գյուղատնտեսական ծագման արտադրանք	170.5	237.1	323.8	673.5	782.2	812.6

* ՀՀ ԱՎԾ տվյալներ:

Ըստ աղյուսակի տվյալների՝ վերջին երեք տարիներին ընդհանուր ծավալում գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 16.4, 17.8, 22.6%, իսկ ներմուծման ընդհանուր ծավալում՝ համապատասխանաբար՝ 18,0, 18.9, 19.1%:

Այսպիսով, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության կայուն զարգացման նպատակով բոլոր խոչընդոտներից խուսափելու համար, անհրաժեշտ է ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ և որակի ու անվտանգության կառավարման համակարգեր, որպեսզի ապահովվի որակական և անվտանգության կայուն ցուցանիշներ ունեցող խիստ մրցունակ ապրանքների արտադրություն՝ խթանելով երկրից արտահանման հնարավորությունները:

**ՀՀ ԱԳՐԱՍՏՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ԻՐԱՑՄԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Զոհաննիսյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման զարգացած արդյունաբերությունը և իրացման կայուն համակարգը գյուղատնտեսության արտադրանքի արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայմաններից է: Գյուղատնտեսության զարգացումը նոր տեխնոլոգիաների և կապիտալ ներդրումների ներմուծումը թույլ կտան ավելացնելու արտադրանքի արտադրողականությունը և բարձրացնելու արտաքին շուկայում հայկական ապրանքների մրցունակությունը՝ խթանելով երկրից արտահանման հնարավորությունները: Գյուղմթերքների արտադրման համակարգի բարելավումը պահանջում է ավելի մեծ ուշադրություն դարձնել արտադրանքի որակի և պարենային անվտանգության ապահովման հիմնահարցերին, ինչը հնարավոր կլինի իրականացնել խոշոր միությունների կազմակերպելու դեպքում:

Բանալի բառեր. *ագրոպարենային համակարգ, պարենամթերքի իրացում, վերամշակող արդյունաբերություն, մթերք գնող-իրացնող ենթակառուցվածք, ապրանքայնության մակարդակ, պարենամթերքի արտահանում & ներմուծում, տեխնոլոգիաների որակի & անվտանգության համակարգ:*

**ПРОБЛЕМЫ ИНФРАСТРУКТУРЫ РЕАЛИЗАЦИИ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ ПРОДУКЦИИ АГРОПРОДОВОЛЬСТВЕННОЙ СИСТЕМЫ
РА**

ЛЕНА ОГАНЕСЯН, к.э.н.

*старший научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА*

Аннотация

Развитая промышленность по переработке сельскохозяйственной продукции и стабильная система реализации являются важнейшими предпосылками повышения эффективности производства сельского хозяйства. Внедрение новых технологий и капитальные инвестиции в сферу сельского хозяйства позволят увеличить производительность производства и повысить конкурентоспособность армянских товаров на внешних рынках, тем самым стимулируя возможности экспорта. Совершенствование системы производства сельскохозяйственной продукции требует еще больше внимания к проблемам качества выпускаемой продукции и обеспечения продовольственной безопасности, решение которых возможно на основе создания крупных объединений.

Ключевые слова: *агропродовольственная система, реализация продовольственных товаров, перерабатывающая промышленность, инфраструктура покупки и сбыта продукции, уровень товарности, импорт продовольственных товаров, система качества и безопасности технологий.*

**ON ISSUES OF SALES INFRASTRUCTURE OF THE FOOD PRODUCTS OF THE AGRO-FOOD SYSTEM
OF THE REPUBLIC OF ARMENIA**

LENA HOVHANNISYAN, Candidate of Sciences (Economics)

*Senior Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

Developed agricultural products' processing industry and the sustainable system of sales infrastructure are those preconditions that ensure the increase in the production of agricultural food products. Application of new technology and capital investments will allow the agriculture to report increase in productivity and competitiveness of Armenian goods in international markets, thus promoting the exports of agricultural products. Improvement of production system of agricultural food products requires seriously addressing the problems with regard to the quality of goods and food safety that could be insured in case of forming large unions.

Keywords: *agro-food system, sales of agricultural products, processing industry, infrastructure of food buyers and sellers, the quality/standards of goods, exports and imports of agricultural products, quality control and safety technology system.*